«ԳՐԱՆՑՎԱԾ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ» ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՂՆՁԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Վ. Հ. ՔԱԼԱՇՅԱՆ

Հայաստանի պղնձարդյունաբերական ձեռնարկություններում XVIII դարի II կեսից սկսած աշխատում էին պգալի թվով բանվորներ, որոնք սակայն դեռ պրոլետարներ չէին։ Սրանք ճորտ կամ պետական գյուղացիներ էին, այն տարբերությամբ, որ բազմաթիվ ֆեոդալական պարտավորություններ կատարելուց բացի ենթարկվում էին նաև արտատնտեսական շահագործման՝ որպես գործարանային բանվորներ։ Այդպես է եղել դրությունը ոչ միայն մեր իրականության մեջ, այլև շատ այլ երկրներում։

Վրաց թագավոր Հերակլ II-ը XVIII դարի 60—70-ական թթ. ձեռնարկելով Հյուսիսային Հայաստանի արծաթի և պղնձի հանքավայրերի շահագործման աշխատանքները, հրավիրեց հույն հանքագործ մասնագետների։ Վերջիններս իրենց ընտանիքներով բնակություն հաստատեցին Լոռու գավառի Ախթալայի և Ալավերդու արծաթի ու պղնձի հանքավայրերում։ Հույն հանքագործները նայած եղած արտոնություններին, այնուամենայնիվ չէին կարող սկսել հանքերի շահագործումը, քանի որ չունեին անհրաժեշտ քանակությամբ բանվորական ուժ ինչպես հիմնական, այնպես և մի շարք օժանդակ, բայց չափազանց դանդաղ աշխատանքներ կատարելու համար, ինչպես, օրինակ, անտառափայտ հատելը, ածուխ պատրաստելը, հանքաքար ու ածուխ տեղափոխելը, փուքսեր փչելը, հնոցներ լցնելը և այլն։ Երկրամասում, ինչպես հայտնի է, գոյություն չունեին ազատ բանվորական ձեռքեր և եթե նույնիսկ այդպիսիները գտնվեին էլ, ապա հույն հանքագործների համար բոլորովին շահավետ չէին։ Այդ պատճառով էլ նրանք առաջին հերթին պահանջեցին հանքերին և գործարաններին տրամադրել անհրաժեշտ քանակությամբ աշխատող ձեռքեր։

Հերակլ II-ը ընդառաջեց հույն հանքագործների պահանջին և նրա հրամանով հանքերին ու գործարաններին ցրանցվեցին 32 հայկական գյուղեր, որոնք ունեին 1344 ծուխ, կամ 7046 շունչ։ Այդ գյուղերը պարտավոր էին ամբողջ տարվա ընթացքում անհրաժեշտ քանակությամբ ձիավոր և հետիոտն աշխատող տրամադրել հանքերին և գործարաններին՝ օժանդակ աշխատանքներ կատարելու համար։ Միայն Ախթալայի հանքերին և գործարանին ամեն ամիս տրամադրվում էր 100-ական ցրանցված գյուղացի անտառափայտ հատելու, ածուխ պատրաստելու, դրանք գործարան տեղափոխելու, իսկ 120—150 հոգի

[1] «Приписные к заводам деревень было 32, из них 22 находились в бывшей Казахской дистанции и заключили в себе 1082 дыма, или 4620 душ, а 10 в Борчалинской дистанции, 2426 душ в 262 дымах, жители всех этих деревень армяне» (տե՛ս Центральный государственный исторический архив Ленинграда (ЦГИАЛ), фонд 37, опись 11, дело 148, листы 206—207).

էլ՝ փուքսեր փչելու և այլ օժանդակ աշխատանքներ կատարելու համար։ Ամեն մի գրանցված գյուղացի մեկ ամսվա ընթացքում պարտավոր էր ամենադժվարին պայմաններում անտատապահայտ հատել, 13—15 բեռ ածուխ պատրաստել և այն տեղափոխել գործարան։ Գյուղացիս գործարան փոխադրված ամեն մի բեռ ածուխի համար պետք է ստանար 30 կոպեկ։ Նրանք աշխատում էին սեփական գործիքներով և բաշոգ ուժով, թեև դրա համար լրացուցիչ վարձատրություն չէին ստանում։ Բեռ ավելին, եթե գյուղացիս ձի չուներ և ի վիճակի չէր ածուխը գործարան փոխադրել, ապա նրանից ամեն մի բեռի համար պահում էին 20 կոպեկ։ Բացի դրանից, անտատապահի օգտին ամեն մի գյուղացուց ամսական պահվում էր 40 կոպեկ։ Այն գյուղացիները, որոնք գործարանում աշխատում էին որպես փուքս փչողներ, ստանում էին հույն հանքագործներից 20 կոպեկ և թագավորից՝ 10 կոպեկ օրավարձ, բայց պարտավոր էին իրենց աշխատածի տասներորդ մասը հանձնել մինբաշուն[3]։

Սակայն գրանցված հայ գյուղացիները լիովին չէին բավարարում հանքերի և գործարանների համար անհրաժեշտ աշխատող ձեռքերի պահանջը։ Դրա համար էլ Վրաստանի տարբեր մասերից, հատկապես հյուսիսային շրջաններից, 40—50 հոգու գյուղացիներ բռնությամբ քշվեցին Ախթալայի և Ալավերդու հանքերում և գործարաններում աշխատելու։ Վրացի գյուղացիները, որպես օժանդակ բանվորներ, իրենց իրավունքներով և պարտավորություններով հավասարեցված էին գրանցված հայ գյուղացիներին և վարձատրվում էին նրանց նման[4]։

Հույն հանքագործները գրանցված գյուղացիներին հարկադրում էին աշխատել այնքան ժամանակ, ինչքան իրենք էին անհրաժեշտ համարում։ Մեզ հասած որոշ տեղեկություններից երևում է, որ հանքերում օգտագործվում էր նաև անչափահասների աշխատանքը։ Հույն հանքագործները երեխաներ էին վարձում մոտակա հայ և աղրբեջանական գյուղերից։ Ադրատության ճիրաններում տառապող գյուղացիները, իրենց գրությունը գոնե մի քիչ թեթևացնելու համար, ստիպված տաժանակիր աշխատանքի էին ուղարկում նաև երեխաներին[5]։

Գրանցված գյուղացիների ծանր վիճակը համարյա թե փոփոխություն չենթարկվեց XIX դարի սկզբներին, երբ 1803 թ. Ախթալայի և Ալավերդու գործարանները դարձան պետական պոսեսիոն գործարաններ։

---

[2] «Акты собранные Кавказской археологической комиссией», т. II, էջ 203։

[3] Նույն տեղում։

[4] Հույն հանքագործները 1802 թ. դեկտեմբերի 23-ին Վրացական Լեռնային արշավախմբի պետ Ա. Մուսին-Պուշկինի անունով գրված իրենց խնդրագրի մեջ խոսելով գրանցված գյուղացիներ տրամադրելու անհրաժեշտության մասին, նաև հիշեցնում էին. „сорок человек имеретинцев прежде обращались у нас в работах, и получали от казны через минбашей свое жалованье, когда же работали они для нас, то мы платили каждому по 20 к. серебром в сутки» (տե՛ս «История горной промышленности Закавказья в документах», Тбилиси, 1936, էջ 138)։

[5] 1802 թ. Ախթալայի և Ալավերդու հանքերի և գործարանների վիճակը պարզելու համար այնտեղ ուղարկված Բորդոնովը գրում էր հետևյալը. „подъем руд вместе конных или ручных ворот, совершался посредством мальчиков, которые, положа в кожаный мешок руды, по силе своей и привязав его за плечи, тащили как бы четвероногие животные на верх» (տե՛ս С. Эсадзе, Очерки истории горного дела на Кавказе, Тифлис, 1903, էջ 86)։

Վրացական Լեռնային արշավախմբի պետ Ա. Մուսին-Պուշկինը պետական պոսեսիոն գործարանը մեծ բանակությամբ աշխատող ձեռքերով ապահովելու համար անհրաժեշտ էր գտնում Լոռու հանքային շրջանը բնակեցնել հայ գաղթականներով, նրանց մոցնելով պետական գյուղացիների շարքը և գրանցելով գործարաններին[6]։ 1804 թ. Ախթալայից թագավորի անունով գրված մի նամակում Մուսին-Պուշկինը խնդրում է այնտեղի գործարաններն իրենց իրավունքներով հավասարեցնել Իուսասատանի գործարաններին. դա հնարավորություն կտար Ալավերդու և Ախթալայի հանքերն ու գործարանները ապահովել բանվորներով[7]։

Վրացական Լեռնային արշավախումբը, անկախ այն բանից, թե ինչպես կվճռվեր հանքերն ու գործարանները բանվորական ուժով ապահովելու հարցը, շտապում է բավարարել հույն հանքագործների պահանջը՝ տրամադրելով նրանց գրանցված գյուղացիներ[8]։ Սակայն Լեռնային արշավախմբի համար պարզ էր, որ եղած աշխատող ձեռքերով հնարավոր չէր իրականացնել արտադրության ընդլայնման ծրագիրը։ Այդ պատճառով որոշում է ընդունվում նոսկիների համեմատությամբ կրկնակի չափով ավելացնել գրանցված գյուղացիների թանակը[9]։ Իշխան Ցիցիանովը հաստատում է Լեռնային արշավախմբի կողմից նախատեսված բոլոր միջոցառումները և կարգադրում տեղական իշխանություններին խստորեն հետևել դրանց կատարմանը[10]։

Իշխան Ցիցիանովի կարգադրությունը՝ «Գրանցված գյուղացիներին Ալավերդու և Ախթալայի գործարանների աշխատանքներում օգտագործելու պայմանների մասին» ուշագրավ է ոչ միայն նրա համար, որ լիովին բավարարեց հույն հանքագործների պահանջը, այլև նրանով, որ անհնարին փոփոխություններով ուժի մեջ մնաց մինչև 1850 թ., երբ վերացվեց գրանցված գյուղացիների կատեգորիան։

Կովկասի կառավարիչը կարգադրում է ամեն ամիս գործարաններին և հանքերին տրամադրել վրաց վերջին թագավորներ Հերակլի և Գեորգիի կողմից սահմանված գրանցված գյուղացիներին, հետևյալ կարգով. 100 մարդ Ղազախից, 40-ը՝ Շուլավերից, 10-ը՝ Ուզունլարից և Դսեղից, 10-ը՝ Շնողից, 2-ը՝ Հաղբատից, 20-ը՝ Մելիք-Ադոմի մոտից։ Իշխան Ցիցիանովը այնուհետև գտնում էր, որ հանքային արդյունաբերության հետագա լայնացման նպատակով լրացուցիչ կերպով անհրաժեշտ է ուղարկել 100 գրանցված գյուղացի նաև հետևյալ մոտակա վայրերից. 45 մարդ՝ Փամբակից և Լոռուց, 8-ը՝ Շնողից, 6-ը՝ Ուզունլարից և Դսեղից, 12-ը՝ Պրիդոմբեկից, 7-ը՝ Շամխորից, 5-ը՝ Երևանից, 5-ը՝ Սարցից և 12-ը՝ Մելիք-Ադոմից[11]։

---

6 ЦГИАЛ, ф. 37, оп. 13, д. 7, лл. 85—87.

7 Նույն տեղում, оп. 11, д. 6, л. 57.

8 1802 թվականի դեկտեմբերի 23-ին հույն հանքագործները Ա. Մուսին-Պուշկինին գրում էին, թե նախկինում նրանք թագավորից ստանում էին 150 ածխագործներ, 40 հոգի էլ Իմերեթիայից, 10 հոգի՝ Շնող և 2 հոգի էլ՝ Հաղբատ գյուղերից (տե՛ս „История горной промышленности Закавказья в документах", էջ 138)։

9 «История горной промышленности Закавказья в документах», էջ 139—142.

10 Նույն տեղում, էջ 162—163։

11 Վրացական Լեռնային արշավախումբն իր որոշման մեջ նախատեսել էր պահանջել լրացուցիչ կերպով ընդամենը 80 գրանցված գյուղացիներ (տե՛ս „История горной промышленности Закавказья в документах", էջ 140)։

Գրանցված գյուղացիների համար սահմանվեցին հետևյալ պարտավորությունները։ 1. Գործարանները գյուղացիներին ազատում էին աշխատանքից ցանքսի և բերքահավաքի շրջանում։ 2. Գործարանի կողմից անտառի պրիստավին—բյամուրչիրաշուն աշխատավարձ նշանակելու կապակցությամբ գյուղացիներին ազատել նրանց վճարելու պարտավորությունից։ 3. Տարբեր աշխատանքների փոխարեն ամեն մի գյուղացի կկատարի մի աշխատանք։ 4. Յուրաքանչյուր գյուղից ուղարկվող աշխատողների կեսը պետք է լինի հետիոտն և կեսը՝ ձիավոր։ 5. Գործարանները պարտավորվում են՝ հետիոտն աշխատողին վճարել ամիսը 4 ռ. 50 կ., իսկ ձիավորին՝ 6 ռուբլի, այն պայմանով, որ հետիոտները այդ աշխատավարձով ամիսը 6 սաժեն փայտ կտրի կամ նույն քանակությամբ ածուխ պատրաստի, իսկ ձիավորներից ամեն մեկը գործարան տեղափոխի մինչև 60 ձիաբեռ ածուխ։ Այն դեպքում, երբ գնարտավոր չէ սահմանել աշխատանքի որոշակի քանակը, հետիոտները պարտավոր են օրվա ընթացքում աշխատել 12 ժամ, իսկ ձիավորները՝ 10 ժամ։ 6. Ճանապարհների և կամուրջների վերանորոգման համար գործարանի մոտակա գյուղերից, անհրաժեշտության դեպքում, հերթականությամբ ուղարկվում են պահանջվող քանակությամբ գյուղացիներ, որոնցից յուրաքանչյուրը, ըստ աշխատանքի ծանրության, ստանում է 5-ից մինչև 10 կոպեկ։ 7. Գործարանների անտառներում դարձանը աշխատելու, ինչպես և հրդեհի դեպքում գյուղացիները պարտադիր կերպով աշխատանքի են ուղարկվում, որի համար նրանց ոչինչ չի վճարվում։ 8. Գործարանները ածուխ և այլ բեռներ տեղափոխելու համար, երբ բեռի ծանրությունը 37—40 փութ է, վճարվում է ամբողջ օրվա համար 80 կոպեկ[12]։

Կովկասի կառավարիչ իշխան Ցիցիանովի վերոհիշյալ կարգադրությունը ոչ միայն գրանցված գյուղացիների, այլև գործարանի շրջակայքի բոլոր գյուղերի համար սահմանեց այնպիսի պարտավորություններ, որոնք գյուղացիներին փաստորեն դարձնում էին գործարանային ճորտեր։ Հայ գյուղացիները, որոնց վրա էր ընկնում նոր պարտավորությունների ամբողջ ծանրությունը, մեծ դժգոհությամբ ընդունեցին այդ կարգադրությունը։ Գյուղացիների մասսայական անողոք շահագործման այդ որոշման դեմ ելույթներ են ունենում կամ բողոքներ ներկայացնում առանձին գյուղական համայնքներ։ Սկսվում է հայ գյուղացիների երկարատև ու համառ պայքարը նոր շահագործողների դեմ։ Այդ պայքարը, որ հիմնականում պասսիվ դիմադրության բնույթ ուներ, երբեմն վերածվում էր եռանդուն դիմադրության։ Բայց անկազմակերպ գյուղացիների բոլոր ելույթները դաժանորեն ճնշվում էին ցարական իշխանության կողմից։

Առաջինն իրենց ձայնն են բարձրացնում Ղազախի հայերը։ Նրանք Ա. Մուսին-Պուշկինին խնդրում էին՝ նախ վճարել գործարաններում աշխատած օրերի համար, ապա «առաջիկայում ազատել մեզ տիպոդական այդ պարտավորության կատարումից և դրա համար օգտագործել միայն նրանց, ովքեր ցանկանում են»[13]։ Իսկ Բորչալուի գյուղացիները կազմակերպված դիմադրություն են ցույց տալիս, երբ փորձում են նրանց հարկադրաբար ուղարկել գործարանային աշխատանքի։ Այդ մասին Լոռու գավառի կապիտան-իսպրավնիկ Տրեսյակովը 1803 թ. ապրիլի 3-ին Վրաստանի գերագույն կառավարչությանը

---

12 «История горной промышленности Закавказья в документах», էջ 162—163։

13 Նույն տեղում, էջ 137։

տարորդում է, թե երբ զավառի պաշտոնական անձինք ժամանեցին Բորնիս՝ հավաքագրելու նախատեսված երանցված գյուղացիներին, ապա վերջիններս ոչ միայն կոպիտ կերպով հրաժարվեցին կատարել այդ պահանջը, այլև իսկական խռովություն սարքեցին՝ գյուղից քշելով պաշտոնական անձանց և ծեծելով նրանց հետ գյուղ եկած զրադիր Ռաֆայել Մանեուրովին[14]։ Ալեքսանդր I կայսեր անունով բոլոր են գրում Շնողի գյուղացիները։ Նրանք հայտնում են, որ այլևս ի վիճակի չեն տանելու իրենց վրա դրված պարտավորությունը, երբ գյուղից պահանջվում է ամեն ամիս գործարանին տրամադրել 18 մարդ և նույնքան էլ քաշող անասուն[15]։

Ցարական իշխանավորները ամեն մի դժգոհություն և բողոք դիտում էին որպես խռովություն և ճնշում էին դաժանորեն։ Բռնությամբ և պահակազորի օգնությամբ գյուղացիներին քշում էին դեպի գործարանները և հարկադրում աշխատել։ Սակայն բռնի կերպով աշխատանքի բերված գյուղացիներն օգտագործելով առաջին իսկ հարմար առիթը, փախչում էին աշխատանքից և թաքնվում անտառներում։ Այդպիսի հարյուրավոր փախուստների մասին Վրացական ՍՍՌ պետական պատմական արխիվի ֆոնդերում պահպանվել են մեծ քանակությամբ փաստաթղթեր[16]։

Ալավերդու և Ախթալայի գործարանների վարչությունների կազմած տեղեկանքները ցույց են տալիս, որ աշխատանքի չներկայացող գյուղացիների թիվը մեծ քանակ է կազմում։ Այսպես օրինակ, 1803 թ. ոչ բոլոր ամիսների համար կազմված տեղեկանքից երևում է, որ Ալավերդու և Ախթալայի գործարաններում աշխատանքի չեն ներկայացել 372 երանցված գյուղացի՝ 256 ձիով, այդ թվում Ղազախից 69 մարդ, Բորնիսից (Մելիք-Ներսի մոտից)՝ 95, Շուլավերից՝ 54, Փամբակից և Լոռուց՝ 33 և այլն[17]։

Լեռնային արշավախումբը և գործարանների վարչությունը, ինչպես և տեղական իշխանությունները, անզոր էին կանգնեցնելու երանցված գյուղացիների մասսայական փախուստը։ Աշխատանքը լքելու և չներկայանալու դեպքերն այնպիսի չափեր են ընդունում, որ Վրաստանի կառավարիչ Ֆ. Ախվերդովը 1808 թ. հուլիսի 10-ին կարգադրում է. «Անհրաժեշտ եմ գտնում, որպես վերջին միջոց փախչող գյուղացիներին աշխատանքում պահելու համար, կազմել նրանց անվանական ցուցակները, ցույց տալով գյուղերը, որի միջոցով հնարավոր կլինի նրանց գտնել և հանձնել խստագույն դատի»[18]։ Ինչպես երևում է, այդ միջոցն անգամ չի օգնում գյուղացիների մասսայական փախուստի առաջն առնելուն։ Նույն Ֆ. Ախվերդովը 1810 թ. դեկտեմբերի 29-ին կարգադրում է Բորչալուի և Ղազախի՝ աշխատանքը լքած և փախած գյուղացիներին պահակազորի հսկողության տակ, կապկպված վիճակում վերադարձնել գործարան և որպես պատիժ նրանց ստիպել աշխատելու երկու ամիս[19]։ Սակայն ցարական իշխանությունների ամենադաժան միջոցներն անգամ հնարավորություն չէին տալիս գործարաններն ու հանքերը ապահովել անհրաժեշտ քանակությամբ

14 Նույն տեղում, էջ 179։
15 Նույն տեղում, էջ 180—181։
16 ЦГИА Груз. ССР, ф. 267, д. 6, 28, 141 և այլն։
17 «История горной промышленности Закавказья в документах», էջ 211։
18 Նույն տեղում, էջ 313։
19 Նույն տեղում, էջ 330։

աշխատող ձեռքերով։ Ալավերդու և Ախթալայի գործարանների վարչության բազմաթիվ հաղորդագրություններից երևում է, որ այդ գրությունը շարունակվում է նաև հետագայում[20]։ Օրինակ, 1813 թ. հունիսի 1-ին Ալավերդու գործարանի վարչության մի զեկուցագրից երևում է, որ Զապոխի դիստանցիայի տարբեր գյուղերի 41 գյուղացիներ, որոնք աշխատում էին անտառում, խոսվություն եւ բարձրացրել և փախել[21]։

Գործարանում գրանցված գյուղացիների վիճակը ավելի էր ծանրանում տեղական կալվածատերերի հարստահարությունների հետևանքով։ Լեռնային արշավախմբի չինովնիկներից մեկը իր մի զեկույցում գրում էր. «...Չեմ կարող չհաղորդել գրանցված գյուղացիների նկատմամբ ազալարների չարաշահումների և ճնշումների մասին և խնդրում եմ, որպեսզի այդ խեղճ ժողովրդին մի որևէ օգնություն հասցվի»[22]։

Կալվածատերեր Մելիքովները, Արղությանները, Բարաթովները, Արովները, Շահնազարովները և շատ ուրիշներ, հատկապես օտարազգի ազալարները, ամեն գնով աշխատում էին մի որևէ մաս կամ շահ ունենալ պղնձահանքերի շահագործումից։ Իսկ երբ այդ նրանց չէր հաջողվում, ապա նրանք բազմաթիվ դիմումներ էին ներկայացնում կառավարությանը և պահանջում էին իրենց գյուղացիներին ազատել գործարանային աշխատանքներից։ Այսպես, օրինակ, իշխան Բարաթովը 1811 թ. մի դիմումով Ալավերդու գործարանի վարչությունից պահանջում էր, որ իր գյուղերից գործարանային աշխատանքի համար գյուղացիներ չվերցնեն[23]։

Վրացական Լեռնային արշավախմբի պետ Ա. Մուսին-Պուշկինը 1804 թ. իշխան Ցիցիանովին ուղղած զեկուցագրում հատկապես նշում է գործարաններին գրանցված գյուղացիների անտեսական ծանր դրությունը[24]։ Ա. Մուսին-Պուշկինին հայ գյուղացիների ծանր դրությունն անհանգստացնում էր այն պատճառով, որ սեռատեսակես բայրակված, դառն ստրկության դուռը հասած գրանցված գյուղացիների աշխատանքը գործարաններում և հանքերում արդյունավետ չէր և դժվար էր այդ պայմաններում առաջ տանել հանքավայրերի շահագործումը։ Իշխան Ցիցիանովը նույնպես չէր թարցնում հայ գյուղացիների անտանելի ծանր վիճակը և Պետերբուրգ ուղարկած իր զեկուցագրում խորհուրդ էր տալիս հրաժարվել հանքերի և գործարանների այդ շահագործման ձևից[25]։ 1806 թ. Ալավերդու և Ախթալայի հանքերի ու գործարանների վիճակը ստուգող Լոպինովն իր զեկուցագրում հատուկ ուշադրություն է դարձնում գրանցված

20 Նույն տեղում, էջ 316, 317—318, 403, 428, 550, 554, 570, 571 և այլն։

21 Նույն տեղում, էջ 403։

22 ЦГИА Груз. ССР, ф. 267, л. 28.

Անդրկովկասում ծառայող ռուս բարձրագույն չինովնիկները իրենց մի շարք զեկուցագրերում և մինչև իսկ պետական պաշտոնական գրագրություններում չէին կարողանում թարցնել հայ գյուղացիների անտանելի և ամենապաժան հարստահարման փաստերը։ 1802 թ. գրված պաշտոնական մի փաստաթղթում խոսելով գործարաններին գրանցված գյուղացիների աշխատանքի կարգավորման մասին, նշվում է. „О прекращении того, чтобы агалары, мелики и кехви не изнуряли их своими работами и поборами в свою пользу" (տե՛ս „Акты", т. II, էջ 203)։

23 «История горной промышленности Закавказья в документах», էջ 335։

24 «Акты», т. II, էջ 208—209։

25 ЦГИАЛ, ф. 37, оп. II, д. 7, лл. 27—28.

գյուղացիների ծանր վիճակին։ Նա գրում է, որ գրանցված գյուղացիները միայն հայեր են։ Նրանք աշխատում են գործարաններում և հանքերում, բայց ազատված չեն պետական և կալվածատիրական մյուս պարտականություններից և այն կատարում են Վրաստանի մյուս գյուղացիների հետ համահավասար։ Այդ երևույթը Նրանց հասցրել է լիակատար տնտեսական քայքայման[26]։

Հայաստանի հյուսիսային շրջաններում ապրող գրանցված գյուղացիները, վերը նշված պարտավորություններից բացի, կատարում էին նաև պատերազմական տարիներին սահմանված բազմաթիվ այլ կարգի պարտավորություններ։

Ալավերդու և Ախթալայի պղնձահալ գործարաններում սահմանված էին դաժան կարգեր։ Գրանցված գյուղացիներին բռնի կերպով քշում էին ամենածանր տեղամասերը և ստիպում էին աշխատել այնքան, ինչքան անհրաժեշտ էին գտնում, թեպետ սահմանված էր, որ ձիավոր գյուղացիները պետք է աշխատեին 10 ժամ, իսկ հետիոտները՝ 12 ժամ[27]։ Գրանցված գյուղացիների կողմից գժգոհության ամեն մի արտահայտություն դիտվում էր որպես խռովության փորձ և գժգոհներն ամենադաժան կերպով պատժվում էին։ Այդ կապակցությամբ բնորոշ է 1804 թ. գործարանի կառավարիչ Ա. Բորդունովի կազմակերպած մասսայական պատժի պատմությունը։ Զմռան մի շատ ցուրտ օր ռոտորիկ, վատ հագնված գյուղացիները խնդրեցին ազատել իրենց այդ օրը փայտ կտրելուց և ուրիշ աշխատանքի ուղարկել։ Գործարանի կառավարիչ Ա. Բորդունովը կարգադրեց «խուռվարարներին» շրջապատել զինվորներով և դավաններով ծեծել։ Այդ դաժան էկզեկուցիային գոհ եղան վեց բանվոր և մի քանիսն էլ աշխատանքի անընդունակ դարձան[28]։ Գործարանի կառավարչի և մյուս ատիճանավորների կամայականությունները, նրանց ամարդի վերաբերմունքը դեպի գրանցված գյուղացիները այնպիսի չափեր էին ընդունել, որ Փամբակի գավառի հայ գյուղացիները ստիպված եղան Լենինային արշավախմբին ներկայացնել մի խնդրագիր, որտեղ ասված է. «1. Բանվորների գլխին կարգված կառավարիչը նրանց պատժում է այնպես խստորեն, որ մի անտանելի ծեծից հետո վեց հոգի տեղից չբարձրացան և ոչ մի հույս չկա, որ դրությունն ապագայում կլավանա։ 2. Բանվորները լսել են, որ իրենց աշխատանքի համար սահմանված է աշխատավարձ, բայց ոչ մեկը ոչ մի կոպեկ չի ստանում, չնայած սեփական անասուններով կրում են պղինձ և այլ բաներ, բայց և դրա համար էլ չեն վճարել ոչ մի կոպեկ։ 3. Նույն այդ կառավարիչը իր անձնական կարիքների համար մշտապես վերցնում է ձիեր և գնում է, ուր որ ցանկանում է, սակայն դրա համար էլ ոչինչ չի վճարում։ 4. Աշխատող բանվորներից վերցրել են նաև պարկեր իրենց կապերով և ինչ են արել, մեզ անհայտ է»[29]։

Այդ վավերագիրը մեր իրականության մեջ գործարաններում աշխատող բանվորների առաջին գրավոր բողոքն է իրենց հարստահարիչների դեմ[30]։

26 Նույն տեղում, թ. 86։

27 «Акты», т. V, էջ 289։

28 ЦГИАЛ, ф. 37, оп. 3, д. 265, л. 16

29 «История горной промышленности Закавказья в документах», էջ 203։ ЦГИА Груз. ССР, ф. 267, д. 28, л. 144.

30 Ալավերդում աշխատող պաշտոնյաներից մեկը Թաղավորի անունով գրված իր նամակում նշում է. «Ասում են, որ նրանք այդ մասին բողոքել են, որը հայերին ոչ մի օգուտ չի բերելու (տե՛ս ЦГИАЛ, ф. 37, оп. 3, д. 265, л. 16).

Ա. Բորոմնովը չի թաքցնում, որ կարողացել է գյուղացիներին ծեծել, բայց պնդում է, որ ամեն մեկը ստացել է 30-ից մինչև 50 ճիպոտի հարված և ոչ ավելի[31]։

1806 թ. նոյեմբերի 2-ին Ղազախի դիստանցիայից գործարաններին գրանցված 22 գյուղերի տայերը Կովկասի գորքերի գլխավոր հրամանատար գեներալ Գուդովիչի անունով մի խնդրագիր են ներկայացնում, որտեղ պատմում են գրանցված գյուղացիների դաժան շահագործման մասին։ Նրանք գրում էին, թե ինչպես սահմանված 4 ռուբլի ամսական աշխատավարձի փոխարեն նրանց վճարում են ամսական միայն 60 կոպեկ, երբեմն էլ 80 կոպեկ կամ մեկ ռուբլի։ Գործարանի կառավարիչները այն աստիճան են մարդկանց ենթում, որ աշխատողն իրեն հասանելիքը տալիս է որպես կաշառք, միայն թե որևէ կերպ ազատվի գործարանային աշխատանքից։

Մայոր Բորոմնովը այնքան դաժան էր, որ նրա անդութ ծեծերի հետևանքով մահացել են 5 մարդ, որոնցից երկուսը՝ Բեկասովը և Մխիթարովը Ագդան գյուղից, Ակոպովը՝ Սևբար գյուղից, Բարասովը՝ Փիփեղ գյուղից և Ղազարովը՝ Թարակ (Խաչթառակ) գյուղից։ «Մայորը մեկ այնքան է ճնշում, որ մինչև իսկ հասանելիք վարձը լրիվ չի վճարում, բայց մեկանից ստացածն է վերցնում լրիվ վճարման մասին։ Աշխատանքային ամիսը վերջանալուց հետո մարդկանց չի թողնում տուն վերադառնան, իսկ երբ նրա կամքին հակառակ ժամկետը լրանալուց հետո վերադառնում են, ապա նրանց ոչինչ չի վճարում»։ Ղազախի գյուղացիները արդարություն խնդրելուց հետո զգուշացնում են, որ այլևս ի վիճակի չեն տանելու այդպիսի վերաբերմունքներ[32]։

Գրանցված գյուղացիներին տանջելու, նրանց աշխատավարձ չվճարելու մասին Կովկասի կառավարչությանը 1805 թ. ապրիլի 21-ին բողոքում է անդամ Բոլնիսի կալվածատեր Մելիք-Արովը[33]։

Ա. Բորոմնովի նման իրենց իրավունքները չարաշահում էին նաև նրա ծառայողները, երբ զեկավարության պահանջով մեկնում էին գրանցված գյուղերը աշխատող ձեռքեր բերելու։ Ղազախի գրանցված գյուղերի քյոխվանները 1806 թ. հունվարի 5-ին տված իրենց ցուցմունքի մեջ բողոքում են յասաուլ Ղազար Դովլաթբեկովից, որը գյուղացիներին աշխատանքի է վերցնում իր քմահաճույքով, խախտելով սահմանված հերթականությունը, անարդար կերպով պատժում է, իր ապրուստի համար բնակիչներից հացահատիկ է խլում և ծանր պահանջներ ներկայացնում գյուղացիներին[34]։

1803—1805 թթ. բռնկված տարափոխիկ հիվանդությունները (մասնավորապես ժանտախտը) մեծ չարիքներ պատճառեցին հանքերում ու գործարաններում աշխատող բանվորներին և գրանցված գյուղացիներին։ Լենինգրադի պետական պատմական կենտրոնական արխիվում պահպանված են ժանտախտի համաճարակից մահացած չինովնիկների ու վարպետների անունները։ Փաստաթղթում իմիջիայլոց նշված է, թե «անչափ շատ է նաև ժանտախտից մահացած գրանցված գյուղացիների թիվը»[35]։

---

31 «История горной промышленности Закавказья в документах», էջ 203։
32 Նույն տեղում, էջ 604—605։
33 Նույն տեղում, էջ 221, 262։
34 Նույն տեղում, էջ 269։
35 ЦГИАЛ, ф. 37, оп. 11, д. 6, л. 41.

Ախթալայի և Ալավերդու պետական պոսեսիոն գործարանները չէին արգարացնում այն հույսերը, որ ոմանք պղնձահանքերի շահագործումը ձեռնարկող Լեռնային արշավախմբի չինովնիկները։ Նրանք փորձում էին անհաջողության ամբողջ մեղքը բարդել գրանցված գյուղացիների վրա։ Ուշագրավ է, որ հույն հանքագործները պղնձի, արծաթի և մյուս մետաղների հանույթի ու ձուլման նվազումը նույնպես պատճառաբանում էին գրանցված գյուղացիների քչությամբ և նրանց վատորակ աշխատանքով։ Այդ պատճառով էլ նրանք գործարանների վարչությունից պահանջում էին միջոցներ ձեռնարկել գրանցված գյուղացիների արտադրողականությունը բարձրացնելու և նրանց հանքերի ու գործարանների հետ լիովին կապելու համար։

Կովկասյան գորքերի գլխավոր հրամանատար իշխան Ցիցիանովը 1805 թ. նոյեմբերի 28-ին ֆինանսների մինիստրին գրած իր զեկուցագրում հայտնում էր, թե անհրաժեշտ է Ախթալայի և Ալավերդու հանքերն ու գործարանները կապալով հանձնել հույն հանքագործներին, առաջարկելով վերջիններիս հանքերի և գործարանների շահագործումը կազմակերպել ազատ վարձու աշխատանքի, և ոչ թե գրանցված գյուղացիների միջոցով[36]։

Մի քանի տարի հետո Պետերբուրգում Լեռնային խորհուրդը քննելով Հայաստանի պղնձարդյունաբերության վիճակի հարցը, եկավ այն եզրակացության, որ գործարաններին գրանցված գյուղացիները պետք է զբաղվեն հողագործությամբ, իսկ հույն հանքագործներին և կապալառուներին հարկավոր է հանձնարարել, որ նրանք հանքերի և գործարանների շահագործումը վարեն ազատ վարձու աշխատանքի միջոցով[37]։

Սակայն ցարական կառավարությունը բոլորովին էլ ցանկություն չուներ փոխելու բանվորների ու ճորտ գյուղացիների համար սահմանված շահագործման սիստեմը և երբ 13-ամյա գոյությունից հետո, 1816 թ. Ալավերդու և Ախթալայի պետական պոսեսիոն գործարանները նորից հանձնվեցին հույն հանքագործներին և կապալառուներին, գրանցված գյուղացիների դրությունը ավելի ծանրացավ։ Ցարական կառավարությունը Հայաստանի լեռնա-հանքային արդյունաբերության մեջ ոչ միայն չվերացրեց գրանցված գյուղացիների շահագործման դաժան սիստեմը, այլև ընդառաջելով հույն հանքագործների և կապալառուների ցանկություններին, գրանցված գյուղացիների համար սահմանեց ավելի ցածր վարձատրություն, քան թե նրանք ստանում էին պետական պոսեսիոն գործարանի գոյության ժամանակ։ Ընդ որում նրանք այժմ պարտավոր էին մեկ ամսվա փոխարեն աշխատելու երկու ամիս[38]։

Ստեղծված տաժանելի պայմանները, գրանցված գյուղացիների մասսայական դժգոհությունները, 1826—28 թթ. ռուս-պարսկական պատերազմի արհավիրքները, ինչպես նաև պատերազմական գործողությունների կապակցությամբ ժողովրդի վրա ծանրացած բազմաթիվ պարտավորությունները ցարական կառավարությանը ստիպեցին որոշ չափով կրճատել հանքերին ու գործարաններին ամրացված գրանցված գյուղացիների թիվը։ Մի պաշտոնական հաղորդման մեջ կարդում ենք, որ 1828 թ., երբ գյուղացիները պատերազմի պատճառով շատ պարտավորություններ ունեին, որոշվեց թեթևացնել նրանց

36 «Акты», т. II, էջ 218, 220։ ЦГИАЛ, ф. 37, оп. 11, д. 7, лл. 27—28.
37 ЦГИАЛ, ф. 37, оп. 11, д. 7, л. 97.
38 Նույն տեղում, д. 148, лл. 322—323.

գրությունը և 155 մարդու փոխարեն Ղազախից և Բորչալուից գործարանային աշխատանքի ուղարկել 100 մարդ[39]։ Այս փոքրիկ զիջումը տևեց միայն մի քանի տարի։ 1831 թ. սենատորներ Կուտայսովի և Մենշիկովի ստուգման ժամանակ հույն հանքագործները բողոքեցին կովկասյան իշխանությունների այս միջոցառման դեմ[40]։ Սենատորները պահանջեցին ոչ միայն վերականգնել նախկին դրությունը, այլև ավելացնել դրանցված գյուղացիների թիվը[41]։ Սենատի որոշմամբ 1834 թ. վերականգնվում է նախկին վիճակը։ Ղազախի և Բորչալուի հայկական գյուղերը նորից պարտավոր էին գործարաններն ուղարկել 155 մարդ՝ 8 ամիս աշխատելու պայմանով։ Միաժամանակ, դրանցված հայ գյուղացիները աշխատանքի պետք է ներկայանային ավելի քան 75 ձիերով[42]։

Հայ գյուղացիության նկատմամբ ցարական իշխանության այս նոր կամայականությունն առաջ բերեց մասսայական դժգոհություն։ Մի պաշտոնական հաղորդման մեջ ասված է, որ հայերն ամբողջ գյուղերով բողոքում են իրենց վրա դրված ծանր պարտավորության կապակցությամբ։ Սակայն նրանց զգուշացված է, թե գյուղերը պարտավոր են կատարել պետական որոշումը, որ նրանց դժգոհությունն անհիմն է։ «Այդ կապակցությամբ եղած բոլոր բողոքները թողնվել են անհետևանք»—գրում էր ցարական չինովնիկը[43]։

1843 թ. փետրվարի 13-ին Ղազախի տեղամասի Կոթիգեղ գյուղի բնակիչները դիմում են կովկասյան կառավարչական օրգաններին և խնդրում իրենց ազատել գործարանային պարտավորություններից։ Նրանք գրում էին, թե Ղազախի տեղամասի հայկական գյուղերում 983 հոգի հասել են այնպիսի դրության, որ օրվա հացի կարոտ են։ Նրանք հաղորդում են նաև, որ 1842 թ. դեկտեմբերին իրենց մոտ եկած պետական չինովնիկը խոստացավ գյուղացիների այդ դրության մասին հաղորդել ուր հարկն է, բայց մինչև այժմ ոչ մի արդյունք չկա[44]։ Պետական չինովնիկը, որ զբաղվում էր այդ խնդրագրի քննությամբ, ստիպված էր իր զեկուցագրում խոստովանել, որ Ղազախի և Բորչալուի տեղամասերի գյուղացիները շատ ծանր կացության մեջ են գտնվում։ Դրանցված գյուղացիները տարիներ շարունակ գանգատվում են իրենց ծանր դրության մասին, որովհետև գործարանային աշխատանքի են ուղարկում ամեն տարի

39 Նույն տեղում, թ. 229.

40 «Այդ մասին բողոքել են հույն հանքագործները, որոնք միշտ բողոքում են իրենց դրության մասին, թեպետ նրանք 1829 թ. գանձարանից ստացել են 4 հազար ռուբլի օգնություն» — գրում էր բարոն Ռոզենը (տե՛ս ЦГИАЛ, ф. 37, оп. 3, д. 550, л. 61).

41 ЦГИАЛ, ф. 37, оп. 11, д. 448, л. 210

42 Նույն տեղում։

43 Նույն տեղում, ф. 44, оп. 2, д. 389, лл. 4—94

Մի զեկուցագրում կարդում ենք, թե հայերի մասսայական դժգոհություններ կապված է 8 հազար հայ գյուղացիների գործարանային ծանր աշխատանքից ազատագրվելու հետ (տե՛ս ЦГИАЛ, ф. 37, оп. 11, д. 448, л. 206).

44 ЦГИАЛ, ф. 37, оп. 11, д. 448, лл. 210—211.

Մենք փորձեցինք Թբիլիսիի և Լենինգրադի պետական պատմական կենտրոնական արխիվների ֆոնդերում գտնել Կոթիգեղ գյուղի բնակիչների կողմից գրված այդ խնդրագրի իսկականը, որը շատ ուշագրավ է նաև այն տեսակետից, որ նրանք հանդես են գալիս Ղազախի տեղամասի 22 հայկական գյուղերի բնակիչների անունից, բայց դժբախտաբար այդ առայժմ մեզ չի հաջողվել խնդրագրի բովանդակությունն այստեղ բերված է այդ հարցով զբաղվող չինովնիկի շարադրությամբ։

8 ամիս տևողությամբ 1240 մարդ։ Եվ դա այն դեպքում, երբ տեղերում մյուսների հետ համահավասար նրանք վճարում են բոլոր հարկերը և կատարում պետական բոլոր պարտավորությունները։ Իր եզրակացության մեջ նա գրում էր, թե գյուղացիներին անհրաժեշտ է ազատել ձիեր տրամադրելուց, նպատակահարմար գտնելով 155 հոգու փոխարեն ուղարկել մինչև 100 հոգի և, վերջապես, խիստ կերպով հսկել, որ չպահվեն գյուղացիներին հասանելիք գումարները»։

Ինչպես տեսնում ենք, շատ համեստ էին այն առաջարկությունները, որոնք երբ պետք է թեթևացնեին հայ գյուղացիների տնտեսական դրությունը։ Սակայն կարևորն այն է, որ դրանցված գյուղացիները ձգտում էին ազատագրվել գործարանային ստրկությունից և զբաղվել միայն իրենց ծայր աստիճան քայքայված տնտեսությամբ։ Կառավարող շրջանները զգում էին, որ դրությունը այնքան է սրվել, որ 8 հազար հայ գյուղացիները բողոքներից և խնդրագրերից բացի կարող էին ավելի վճռական միջոցների դիմել։ Գոթիգեղի գյուղացիների խնդրագիրը այս անգամ ինչ-որ դեր կատարեց։ Միաժամանակ պարզվեցին նաև հույն հանքագործների չարաշահությունները պետության և հայ գյուղացիների նկատմամբ»։ Այդ չարաշահումների մասին բազմաթիվ փաստեր են բերված «Դրանցված գյուղացիների մասին» Անդրկովկասի Երկրամասի գլխավոր վարչության խորհրդի 1845 թ. զեկուցագրում։ Այստեղ խոսվում է այն մասին, որ պետությունը գյուղացիներին կտրելով երկրագործությունից բավական վնաս է կրում։ Այսպես, օրինակ, գանձարանը հույներից ստանում է ընդամենը 4 հազար ռուբլի, իսկ միայն Շուլավեր գյուղը պետությանը վճարում է 1500 ռուբլի։ Այդ գյուղը կարող էր կրկնակին վճարել, եթե 50 մարդ աշխատանքի չուղարկվեին գործարան։ Ի դեպ, Շուլավերի գյուղացիները հույն հանքագործներին սիստեմատիկորեն խոշոր գումարներ վճարելով իրենց ազատել են գործարանային պարտավորություններից։ Սիթե լավ չէր լինի,—ասվում է զեկուցագրում,—եթե այդ գումարները մտնեին պետական գանձարանը[47]։ Ի՞նչ անել, հարցնում են զեկուցագրի հեղինակները, արդյո՞ք հանքերը և գործարանները կապալով հանձնել մի մարդու։ Բայց դա կարող էր հասցնել հույն հանքագործների քայքայմանը և հանքերի գիշատիչ շահագործմանը։ Ավելի լավ է պահպանել նախկին դրությունը[48]։ Սակայն ցարական կառավարությունը, որ այդ ժամանակ շահագրգռված էր Հայաստանի պղնձի արդյունաբերության արտադրանքի բարձրացումով և անհանգստանում էր դրանցված գյուղացիների մասսայական զայրույթից, մտածում էր այդ խնդրին ավելի որոշակի լուծում տալ։

Ուշագրավ է, որ անսպասելի կերպով օգնության է հասնում ցարական արքունիքի բարձրաստիճան չինովնիկներից մեկը, սենատոր Գանը, որը Նիկոլայ I կայսեր հանձնարարությամբ դեռևս 1838 թ. ստուգման նպատակով

---

45 ЦГИАЛ, ф. 37, оп. 11, д. 448, л. 211.

Մի պաշտոնական զեկուցագրում Ղազախի հայ գյուղացիներին հույն հանքագործների կողմից տրվող վարձատրության մասին կարդում ենք. «22 армянских селений вознаграждаются за выставку 100 рабочих и 70 лошадей в течение 8 месяцев 23 руб. 18 коп., это удостоверяется официальными фактами».

46 ЦГИАЛ, ф. 37, оп. 11, д. 448, л. 213.

47 Նույն տեղում, թ. 214։

48 Նույն տեղում, թ. 217։

եղել էր Անդրկովկասում և ծանոթ էր Հայաստանի պղնձարդյունաբերության վիճակին։ Նա իր ներկայացրած ֆինանսական ռեֆորմի նախագծի մեջ հարց է բարձրացնում՝ վերացնել գրանցված գյուղացիների կատեգորիան, իսկ արդյունաբերողներին հանձնարարել բանվորներ վարձել կամավոր համաձայնությամբ[49]։

Գրանցված գյուղացիներին ազատելու տրամադրություն կար նաև Լեռնային դեպարտամենտում։ Այսպես, 1843 թ. Ախթալայի կալվածատեր իշխան Մելիքովը խնդրում է իրեն հանձնել Ախթալայի հանքերի շահագործումը և միաժամանակ պահանջում է այդ նպատակի համար տրամադրել գրանցված գյուղացիներ[50]։ Բավական երկար ձգձգումից հետո, 1846 թ. Լեռնային դեպարտամենտը գրում է Կովկասի փոխարքային, թե Ախթալայի հանքերը մեծ նշանակություն չունեն պետության համար և այդ պատճառով էլ կարելի է թույլ տալ իշխան Մելիքովին՝ իր հաշվին սկսելու հանքերի շահագործումը, դրա համար օգտագործելով իր գյուղացիներին կամ վարձելով բանվորներ[51]։ Ինչ վերաբերում է Մելիքովի պահանջին՝ գործարանին գյուղացիներ գրանցելու մասին, ապա օրենքը թույլ է տալիս այդ, սակայն այժմ վերոհիշյալ խնդիրը հնարավոր չէ բավարարել, որովհետև գյուղացիները գործարանային աշխատանքի պարտավորությունը համարում են անչափ ծանր և բազմաթիվ անգամներ դիմել են՝ ազատվելու հարցով[52]։ Ցարական չինովնիկների և պաշտոնական օրգանների գրագրություններից երևում է, որ գրանցված գյուղացիների կողմից մղված պայքարն այնպիսի սուր բնույթ էր ստացել, որ կառավարությունը ստիպված է եղել զբաղվել այդ հարցով։ Վերջապես, 1846 թ. դեկտեմբերի 18-ին կովկասյան կոմիտեն ընդունում է «Գյուղացիների և գործարանների հարցի մասին» որոշումը։ Այդ որոշմամբ թույլատրվում էր Ալավերդու և Շամլուղի հանքերն ու գործարանները իրենց հողերով և անտառներով աճուրդի միջոցով փոխանցել կապիտալիստական սեփականի։ Որոշվեց գործարաններից հանել գրանցված գյուղացիներին և նրանց ազատել գործարանային բոլոր պարտավորություններից, բայց պետական հարկերը նշանակելու դեպքում հաշվի առնել նրանց վրա եղած գործարանային պարտավորությունը և գանձարանի օգտին ավելացնել նրանցից գանձվող հարկերը[53]։

1849 թ. նոյեմբերի 30-ին Կովկասի փոխարքան հաղորդում է, որ 1850 թ. հունվարի 1-ից գրանցված գյուղացիներն ազատվում են գործարանային պարտավորություններից և նրանց վրա են դրվում պետական գյուղացիների պարտավորությունները և հարկերը[54]։ Նույն տարվա դեկտեմբերի 24-ի փոխարքայի պաշտոնական գրության մեջ ասված է, որ հույն հանքագործները, որոնք աճուրդի միջոցով ձեռք են բերել Ալավերդու և Շամլուղի հանքերն ու գործարանները, սկսած 1850 թ. հունվարի 1-ից իրավունք չունեն պահանջելու գրանցված գյուղացիներ և պարտավոր են ոչնչացնելու համար վերադարձնել այն

---

49 «Обязанность жителей некоторых деревень Борчалинского и Казахского участков Тифлисского и Елисаветопольского уездов доставлять горным промышленникам рабочих людей и лошадей отменяется» (տե՛ս ЦГИАЛ, ф. 37, оп. 11, д. 448, л. 15).

50 ЦГИАЛ, ф. 37, оп. 11, д. 448, л. 346.

51 Նույն տեղում, թ. 347։

52 Նույն տեղում, թ. 348։

53 Նույն տեղում, թթ. 353—354։

54 Նույն տեղում, թ. 413։

գրքերը, որտեղ գրանցված են գյուղացիները[55]։ Այսպիսով, համարյա հարյուրամյա գոյությունից հետո, Հայաստանի պղնձարդյունաբերության մեջ վերացվեց գրանցված գյուղացիների տաժանակիր աշխատանքի սիստեմը։

Գրանցված գյուղացիների սիստեմի վերացումը դրական դեր կատարեց Հայաստանի պղնձարդյունաբերության հետագա զարգացման գործում։ 1850 թ. հետո, Հայաստանի լեռնահանքային արդյունաբերությունը, թեպետ դանդաղորեն, կանգնեց կապիտալիստական զարգացման ուղու վրա։ Կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետ միասին սկսեց ձևավորվել Հայաստանի բանվոր դասակարգը, այն առաջավոր ուժը, որն արդեն ի վիճակի էր կազմակերպված ձևով պայքարելու շահագործողների դեմ։

ПОЛОЖЕНИЕ «ПРИПИСНЫХ КРЕСТЬЯН» В МЕДНОРУДНОЙ ПРОМЫШЛЕННОСТИ АРМЕНИИ

В. А. КАЛАШЯН

(Резюме)

Происхождение категории приписных крестьян в Армении связано с возникновением местной горнорудной промышленности. Грузинский царь Ираклий II предоставил месторождения серебра и меди в Ахтале и Алаверди в распоряжение греков-рудопромышленников и по их требованию, насильственно, для принудительной работы, приписал к заводам 32 армянских селения, обязав их предоставлять требуемые рабочие руки.

Греческие рудопромышленники никаких юридических обязательств, ограничивающих их права по отношению к приписным крестьянам, не имели. Обладая свободой действия, рудопромышленники бесчеловечно эксплуатировали приписных крестьян. Рабочие обязаны были являться на работу со своим инвентарем и тягловой силой. При отсутствии собственных инструментов и лошадей у крестьян удерживали треть поденной платы. Приписные крестьяне работали в некрепленных рудниках, так называемых «греческих норах», всегда заполненных водой и находившихся под угрозой обвала. Широко применялся труд подростков и мальчиков.

В положении приписных крестьян ничего не изменилось, когда в 1803 г. Ахтальский и Алавердский заводы стали государственными посессионными предприятиями. Царское правительство, сохранив систему насильственного прикрепления крестьян к заводам, решило удвоить число приписных крестьян и до мелочей регламентировать их работу. Эти мероприятия вызвали волну возмущения среди армянского крестьянства. Но малейшее недовольство существующим порядком со стороны приписных крестьян объявлялось бунтом, и «бунтовщики» подвергались жестоким мерам наказания.

55 Նույն տեղում, էջ. 415—417։

После 1816 г., когда царское правительство отказалось от дальнейшей государственной эксплуатации промышленности Армении, еще более ухудшилось положение приписных крестьян. Греческие рудопромышленники снова стали хозяевами дела. При этом они смогли добиться, чтобы каждый приписной крестьянин вместо установленного в прошлом одного месяца в году теперь работал два месяца, и одновременно была снижена поденная плата за работу на заводе и в рудниках.

Массовое недовольство армянского крестьянства, его длительная борьба против феодальной системы эксплуатации заставили царскую власть заняться вопросом приписных крестьян Алавердского промышленного района. С 1 января 1850 г., после почти столетнего существования, категория приписных крестьян в Армении была отменена. Жизнь показала, что принудительный труд приписных крестьян был малопроизводителен и что он нанес большой вред развитию медно-рудной промышленности Армении.

Отмена системы принудительного труда сыграла определенную положительную роль в деле развития медной промышленности Армении. После 1850 года, хотя и очень медленно, но все же меднорудная промышленность Армении стала на путь капиталистического развития. А с развитием капиталистических отношений в Армении началось формирование рабочего класса, той передовой силы общества, которая уже была способна более организованно бороться против своих угнетателей, за социальную и политическую свободу.